

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 4

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

22 նոյեմբերի 2011թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ (մարզի համայնքների ղեկավարները), մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և 2012 թվականի բյուջեների հաստատման գործընթացի մասին:  
**/Ջեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարդյան/**
2. Մարզի տարածքում իրականացվող քաղաքաշինական ծրագրերի իրականացման ընթացքի և առկա խնդիրների մասին:  
**/Ջեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ուստաբաշյան /**
3. 2011թ. մարզի տարածքում իրականացված գյուղատնտեսական աշխատանքների և 2012թ. նախապատրաստական աշխատանքների մասին:  
**/Ջեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/**
4. Տեղեկատվություն մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների ընտրության և ուսուցիչների թափուր տեղերի համար անցկացվող մրցույթների վերաբերյալ:  
**/Ջեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լ. Հարությունյան/**
5. Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման 15-ամյակի կապակցությամբ մարզի մի շարք համայնքի ղեկավարների և նրանց աշխատակազմերի աշխատակիցների ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրով խրախուսելու մասին:  
**/Ջեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ Ս. Ավետիսյան/**

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և 2012 թվականի բյուջեների հաստատման գործընթացի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի

աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյանը:

Օրակարգի երկրորդ հարցի՝ «Մարզի տարածքում իրականացվող քաղաքաշինական ծրագրերի իրականացման ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Արշակ Ուստաբաշյանը:

Օրակարգի երրորդ հարցի՝ «2011թ. մարզի տարածքում իրականացված գյուղատնտեսական աշխատանքների և 2012թ. նախապատրաստական աշխատանքների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյանը:

Օրակարգի չորրորդ հարցի՝ «Տեղեկատվություն մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների ընտրության և ուսուցիչների թափուր տեղերի համար անցկացվող մրցույթների վերաբերյալ» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լյուդվիգ Հարությունյանը:

Օրակարգի հինգերորդ հարցի՝ «ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրով խրախուսելու մասին» ՀՀ Սյունիքի մարզպետի որոշումը ներկայացրեց ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ Սեյրան Ավետիսյանը:

Մարզպետը տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման 15-ամյակի կապակցությամբ շնորհակալագրեր հանձնեց մարզի մի շաք զամայնքների ղեկավարների և նրանց աշխատակազմերի աշխատակիցների:

Հեռուստատեսության միջազգային օրվա կապակցությամբ մարզպետի շնորհակալագրեր հանձնեցին մարզային չորս հեռուստաընկերությունների ղեկավարներին:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

/Կցվում են զեկուցումները/:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**

 **Ս. Խաչատրյան**